

1933

17 FEB 2010

Գ. ԱՆ.

✓ ՀՀ Հանդիսական գրքերի պահպան


ԹԵ ԻՆՉՊԵՍ

ԱՌՈՂՋԱՆՈՒՄ Ե

ՄԱՆՐ ՅԵՐԿՐԱԳՈՐԾԻ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

• 2001



ԳՅՈՒՂՂԱՎԱՏ

1933

ՅԵՐԵՎԱՆ

11 FEB 2013

30372

33814
8-57

308(48c)

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՌՈՂՋԱՆՈՒՄ
Ե ՄԱՆՐ ՅԵՐԿՐԱԳՈՐԾԻ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ЦЕНТР. ГОСБИБЛИОТЕКА ТССР

ИНВ. № 243

1.

Մոսկվայի Խորհրդի նիստում, 1919 թվին,
Լենինն ասում եր՝

Սուխարևկան*) փակված ե, սակայն սար-
սափելին այն Սուխարևկան ե, վորն ապրում ե
յուրաքանչյուր մանր տնտեսատիբոջ հոգու և գոր-
ծի մեջ։ Այդ Սուխարևկան ե, վոր պետք
ե փակել։

Լենինը բազմիցս շեշտել ե, վոր այդ «Սու-
խարևկան» պետք ե փակել մեր ժողովրդական
տնտեսության բոլոր ճյուղերը ժամանակակից
առաջավոր տեխնիկայի բազայի վրա դնելու մի-
ջոցվ, զյուղում տնտեսաձեր հիմնովին հեղաշր-
ջելու միջոցով։

«Մանր յերկրագործի վերամշակման և նրա
ամբողջ հոգեբանության ու սովորությունների

*) Սուխարևկա—խոշոր շուկա Մոսկվայում։



2796-2007

վերափոխման գործը սերունդներ պահանջող գործ
եւ կուծել այդ խնդիրը՝ մանր յերկրագործի վե-
րաբերմամբ, առողջացնել, այսպես ասած, նրա
ամբողջ հոգեբանությունը, կարող և միայն նյու-
թական բաղան, տեխնիկան, տրակտորների և
մեքենաների գործադրումը յերկրագործության
մեջ մասսայական մասշտաբով, ելեկտրիֆիկա-
ցիան մասսայական մասշտաբով»: (Լենին)

Առաջավոր տեխնիկայի մասսայական գոր-
ծադրումը գյուղատնտեսության բնագավառում
և դրա հետևանքով տնտեսության նոր, կոլեկտիվ
ձևերի հաղթանակը գյուղում, «ամեն որ, ամեն
ժամ կապիտալիզմ ծնող» մանր սեփականատի-
րական տնտեսությունների վերակառուցումը նոր
հիմունքներով, ինչպես և կապիտալիստական դա-
սակարգի վերջին ներկայացուցիչ՝ կուլակության
լիկվիդացիան գալիս են փակելու դասակարգա-
յին տարբերություն և շահագործում ծնող բոլոր
կանանցերը: Դանդաղ, սակայն համառ կերպով և
անդառնալիորեն փակվում ե այն «Առևխարևեկան»,
վորը կար յուրաքանչյուր մանր տնտեսատիրոջ
հոգու և գործի մեջ: Մանր, գաճաճ տնտեսու-
թյունների սոցիալիստական վերակառուցումից
հետո այժմ ամենից կարևոր հենց այդ եւ այժմ
մեր կոմունիստական գիւղակերպությունների

առաջ, վորպես ժամանակի հրատապ և իրագոր-
ծելի խնդիր՝ դրվում ե մանր բուրժուական սե-
փականատիրական տեխնիկացների ու տրամադրու-
թյունների հաղթահարումը, մեղ համար «ամե-
նից սարսափելի սովորույթի ուժի» (Լենին) հաղ-
թահարումը կոլտնտեսական գյուղացիության
գիտակցության ու հոգու մեջ, վոր նա, վորպես
ժառանգություն, իր հետ բերել ե իր «պապե-
նական ոճախից»:

Այդ առնչությամբ մենք պետք ե ընդգծենք,
վոր այս տարվա գյուղատնտեսական կամպա-
նիան պատմական խոշոր նշանակություն ուներ
նաև այն տեսակետից, վոր կոլտնտեսական շարժ-
ման նախորդ տարբիների հաջողությունների հի-
ման վրա, ինչպես և այս գարնանը դաշտում
խկապես հերոսական աշխատանք կազմակերպե-
լու հիման վրա, մի նոր ու խոշոր քայլ արվեց
կոլտնտեսական գյուղացիության գիտակցության
միջից մանր սեփականատիրական տեխնիկացները
վանելու ուղղությամբ, նախկին սեփականատի-
րությը վերամշակելու, նրա հոգեբանությունն ա-
ռողջացնելու և նրանից սոցիալիստական հասա-
րակարգի գիտակցից քաղաքացի պատրաստելու
ուղղությամբ:

2.

Այս գարնան մենք կրինակի կրծատ ժամկետներ ունեցինք: Գարունն ուշացավ մոտ մեկ ամիս: Չնայած դրան՝ մենք ամենակարճ ժամանակամիջոցում Հայաստանում գարնանացանի պլանը գերակատարեցինք, և կատարեցինք այնքան ցանք, վորքան չի տեսել Հայաստանը խորհրդայնացումից հետո և պատերազմից առաջ: Միության մեջ նույնպես մենք մեր հետև թողինք ցանքի տեսակետից ռեկորդային համարվող 1930 թիվը: Շատերը տրամադրի են այդ յերկույթը բացատրել միայն մեր գյուղատնտեսության տեխնիկական սպառագինման գծով ունեցած զգալի առաջադրությամբ: Այդ անկասկած վճռական գործոն եւ Սակայն այդ միայն խնդրի տեխնիկական կողմն եւ Գյուղի տեխնիկական զինավորումն արդյունք չեր ունենա, յեթե գյուղացիության վերաբերմունքի մեջ դեպի սոցիալիստական տեխնիկան և դեպի տնտեսության համայնական ձեռվրը, արմատական փոփոխություն չկատարվեր, թեև հասարակական հոգեբանության այդորինակ փոփոխությունը պայմանավորված ետնտե-

սաձեկի և տեխնիկական զարգացման մեջ կատարվող փոփոխությամբ: Քիչ չեն այն դեպքերը, յերբ ահազին տեխնիկական միջոցներ ունեցող կոլտնտեսություններում ներքին նեխվածություն ե առաջացել միայն այն պատճառով, վորտնտեսության վլուխ խսկական բոյլերիները չեն կանգնած յեղել թշնամին անարգել հրահրել ե կոլտնտեսականի մանր սեփականատիրական տեխնիկացները: Դաշտում խսկապես հրաշքներ գործելու բոլոր նախադրյաններն ունեցող Զաֆարապատի կոլտնտեսության մեջ անցյալ տարինեղծին վախիդարի մի բանակ առաջացավ, վորովհետեւ թշնամու ազդեցության տակ, ինչպես և սովորութիւնութիւն կոլտնտեսականը հանրային ցանքը իրենը չեր համարում: Սակայն այժմ նորը, ամենից կարեորը կոլտնտեսական շարժման համար այն ե, վոր կուլակային ինդիվիդուալիստական հոգեբանությունից գեռ չազատված կոլտնտեսականների առանձին խմբերի կողքին՝ մենք ունենք այնպիսի յերկույթ, վոր կուլտնտեսական ներկաների առաջ գործում է Յեվ կոլտնտեսական կարգերի շնորհիվ հանրային աշխատանքի պրոցեսում առաջացող նոր հոգեբանության ար-

տահայտությունը յեղավ այն չտեսնված պաֆուր, վորով բազմաթիվ կոլտնտեսություններում դաշտ են գիմում կոլտնտեսական բրիգագները: Միայն դրանով կարելի յե բացատրել այսպիսի չտեսնված յերևույթ, վոր Լենինականի Փ. Ղարաբիլսայի, Ճլուսանի, Մոլլամուսայի կոլտնտեսականները մեկ ամիս շարունակ ջաներով աշխատում եյին գիշերից մինչև լույս և այգաբացից մինչև ուշ գիշեր: Նրանք, իրենց նոր գործը մոլեռանդորեն առաջ մղող այդ մարդիկ տառացի կերպով որական աշխատում եյին քսան ժամ, կամավոր կերպով, մեծ փողեվորությամբ և հասարակ «բուլլրի» (գութան) արտադրողականությունն այդ գյուղերում հասցնում եյին տրակտորի արտադրողականությանը որական մինչև 2—3—4 հեկտարի:

Այդ նույն պաֆուր կրկնապատճիկ ու յեռապատճիկ մենք ունեյինք հնձի շրջանում, յերբ հասկը ծանրությունից խոնարհվել եր, և մեր դաշտերը «տնքում» եյին մինչև այժմ չտեսնված բերքի տակ:

Համարյա բոլոր կոլտնտեսություններում հունձը կատարվում եր մեծ փողեվորությամբ: Սամաղարի կոլտնտեսուհիները յերգելով հնձում

եյին լուսնի լույսով մինչ առավոտ, Ղափլիյի կոլտնտեսականներից «կասիլկա» Գալուստը հընձում եր որական 1 և կես հեկտար՝ խկապես «կասիլկայի» չափ, դափլեցի «կոմբայն» հարութը ասում են, վոր որական հնձել և 2 հեկտար, համարյա կոմբայնի չափ: Այդպիսի գեպքերը բազմաթիվ են:

Այդ խանդավառությունն արտահայտվեց նաև նրանով, վոր բազմաթիվ մարդիկ, վորոնք քաշ եյին գալիս շարժման պոչից, վորոնց մեջ ծովությունը մարմնացել եր, վերափոխվեցին արագությամբ և անցան առաջավոր դիրքերը:

Կյանքը, վոր այնքան դանդաղ և ապուշ եր գյուղում, արագացավ: Հունձը, վոր առաջ ձգձգփում եր մինչև աշուն, արտը յերբեմն կրծդած մնում եր դաշտում (ինչպես յեղավ անցյալ տարի Բաշգյանու և մի քանի այլ կոլտնտեսություններում) այս տարի կոլտնտեսությունների մեծ մասում կատարվեց մինչև այժմ չտեսնված արագությամբ և խնամքով: Շատ կոլտնտեսություններ առաջին անգամ հունձը լրիվ խուրձ կապեցին համարյա բոլոր կոլտնտեսություններում, հայաստանում առաջին անգամ՝ կազմա-

կերպեցին հասկահավաք ողակներ։ Կոլտնտեսաւ կանոներն իրար հասկանում եյին, պահանջում եյին իրարից մաքուր հնձել, մաքուր փոցիսել սայլը բարձելուց հետո մաքուր սամրել, փորպես զի չինի թե ճանապարհն «ավլելով» գնա, ինչպես անցյալ տարի ավլելով ու գզզված եյին Յելենովկայի կոլտնտեսության սայլերը։

Այդ՝ ինչպես և կոլտնտեսականների շարքերում առաջացող գիտակցական կարգապահությունը յերեսում ենակ հետեւյալ թվից. 1932 թվին դաշտային աշխատանքներին մասնակցել են Հայաստանի բոլոր աշխատունակ կոլտնտեսականների 44,2 տոկոսը, իսկ այս տարի՝ 78,2 տոկոսը։ Այսպիսի պաֆոսը հնարավոր եր միայն կարգ ու կանոնի յենթարկված խոշոր տնտեսության մեջ։ Իսկ վոր այդ կարգ ու կանոնն այս տարի շատ կոլտնտեսություններում մտցվեց, այդ յերեսում ե գարնանից սկսած բոլոր աշխատանքներից։

Բավական ե հիշատակել թեկուզ Արբաթի կոլտնտեսությունը, ուր հեռվից յերեսում ե, վոր բամբակը սրտացավ տեր ունի, ուր լայնածավալ դաշտերում և բարեխիղճ կոլտնտեսականը մի հատիկ խոտ չի թողել, բացի բամբակի թփից։ Նա

նույնիսկ մի հատիկ խոտ չի թողել առօւների ափերին, հողերի սահմաններում, վորպեսզի այնտեղ չբազմանան վնասատուները։ Իսկ յերբ հարևան գյուղից կարաղրինան հասավ Արբաթ, արբաթեցի կոլտնտեսականն այլևս չսպասեց գեղորայքին։ Նա ձեռքով, հատ-հատ հավաքեց կարաղրինան տերեկի վրայից։ Յեվ բամբակն աճեց փարթամորեն։ Այդ նույն կարգը հաստատվեց շատ ու շատ կալերում։ Այստեղ, մի շարք կալերում մեքենան ինքը կարգի հրավիրեց մարդկանց։ Լենինականի կոլտնտեսությունների դաշտերում առաջին անգամ հոնդաց կոմբայնը, իջևվանի նորակառուցյա հիգրոկմյանն ուժ տվեց հարևան գյուղերի կալերում գրված կալսիչներին։ Կար մեքենան թե չկար՝ կարգն այսպես եր. յերբ խմբագրության շրջիկ բրիգադը մոտեցավ Ազատաշենի կոլտնտեսության կալին, յերիասարդ պահակը գեռ հարյուր քայլի վրա գոչեց։

— Ըսկեր, պապիրոսդ հանգցըու։

Այստեղ առուն բերել եյին կալի մոտ և դույլերը կախել ծառից։ Շիրազի և Թայթանի կոլտնտեսությունները կալի մոտ ջրհորներ եյին պատրաստել։ Իսկ պահակներն աշալուրջ կերպով հսկում եյին գիշեր-ցերեկ։ Ապա թող թշնամին

փորձի թաթը մեկնել թող կրակը համարձակվի...
Այսպիսի կարգ ու կանոնը, վոր ստեղծվում ե
շատ ու շատ կոլտնտեսություններում, այնպի-
սի մարդկանց ձեռքով, վորոնք ւերբեք
կարգ ու կանոնի չեն յենթարկվել
խոսում ե այդ մարդկանց հոգեբանության մեջ
առաջացող բեկման մասին:

* * *

Նոր հոգեբանությունը, վոր պայքարով և
ներքին հակասություններով պատվաստվում ե
նախկին մանր սեփականատերերի մեջ ամրա-
նում ե սկսած կոլտնտշարժման արշալույսից և
նրա զարգացման հետևանքով ու նրան գուգըն-
թաց, ավելի ցայտուն կերպով յերեռում ե առա-
ջավոր կոլտնտեսություններում։ Ուզունարի,
Սամաղարի, Ուռուտի, Ստեփանավանի և բազմա-
թիվ այլ կոլտնտեսություններում առաջավոր
անհատ կոլտնտեսականն արդեն սկսել ե «մերվել»
ընդհանուրին և նրա աշխարհազգացողության
մեջ նորը, կոլտնտեսայինը, սոցիալիստականն ար-
դեն արմատներ ե գցում հիմնավոր կերպով։
Ասում են, վոր Դարաքիլսայի շրջանի Հաջի-
դարա կյուղի կոլտնտեսականներից մի քանիսն

այս գարնան յեռուն աշխատանքի ժամանակ,
իրենց սեփական խոտից լրացուցիչ
կերեյին տալիս կոլտնտեսության
յեզներին։ Փաստը վորքը ե, սակայն յեզակի
չե և չափազանց արժեքավոր և պատմական նշա-
նակություն ունեցող։ Այդ փոքրիկ փաստը
վկայում ե դարերով քարացած սեփականատիրական
մորալի նահանջի
ու քայլքայման մասին, այն մասին,
վոր կոփվում ե նոր, անդասակարգ
հասարակարգի գիտակից քաղաքացին։
Այդ գծով մենք վորոշակի բեկման ականատես
ենք նույնիսկ այնպիսի կոլտնտեսություններում,
ինչպիսին Փարաքարինն ե, ուր մենք մինչև այս
տարի չնչին փոքրամասնություն ունեյինք, ուր
հենց այդ պատճառով ամեն տարի փչանում եյին
կոլտնտեսության բամբակի և խաղողի թանկար-
ժեք կուլտուրաները, ուր լողբությունն արդեն
մասսայական յերեռույթ եր դարձել և հանդես եր
դալիս վորպես կուրակային սարուածի, մասնա-
վոր սեփականատիրոջ կողմից տնտեսության ուն-
ցիալիստական ձևին բոյկոտ անելու կերպարան-
քով։ Հետևանքը՝ հեկտարից 3 ցենտներ վատո-
րակ բամբակի, 5—6 ցենտներ խաղող (60 ցենտ-

ների փոխարեն), կազմալուծում և քայլայում: Բավական եր գործն իրոք բայլշեիկորեն կազմակերպել այդտեղ, տնտեսությունը մաքրել կուլակային վնասարարական տարրերից, կոլտնտեսականի վերաբերմունքի մեջ բեկում մտցնել և ահա այդ կոլտնտեսությունն անցնում է առաջավորների շարքը: Այդտեղ նորը, զլխավորն այն է, վոր կոլտնտեսականների մեծամասնությունը համոզվեց խոշոր՝ հանրային տնտեսության առավելությունների մեջ, կոլտնտեսության հեղինակությունը բարձրացավ հենց իր՝ կոլտնտեսականի աչում: Նա համոզվեց, վոր այսպիսի կարգ ու կանոն ունեցող տնտեսության մեջ ինքը կարող է ապրել վոր այդ տնտեսությունն ապահովում է իր և իր յերեխանների ապագան: Գարնան առաջին հաջող և վոգեորգած աշխատանքից հետո մենք արդեն մեծամասնություն ունենք Փարաքարի կոլտնտեսության մեջ: Այդ համոզմունքով նրանք դաշտում մինչև այժմ իրենց համար չտեսնված գործ կատարեցին: Հերկի ժամանակ բոլոր կոլտնտեսականները դաշտում եյին, լրացնում եյին տրակտորի աշխատանքը ձեռքով և հավաքում եյին խոտերի արմատները: Վատ աշխատանքի

հետևանքով վերջին տարիներս Փարաքարի կոլտնտեսության հողերում բազմացել եյին մոլախոտերը և հողը պատել: Զեր կիրառվում ազգութեանիկան վորեւ միջոցառում: Այս գարնանն առաջին հիմնական գործը, վոր կատարեցին Փարաքարի կոլտնտեսականները բերքատվության համար մղվող պայքարում՝ դա պայքարն եր մուլախոտի դեմ: Արտադրական պլանով նախատեսնված եր մոլախոտի արմատ հավաքել 4 հեկտարի վրա միայն մեկ անգամ: Կոլտնտեսականները մի փոքր «խախտում» կատարեցին և 15 հեկտար հող մաքրեցին արմատներից 3 անգամ—հերկից հետո, փոցխելուց հետո և տափանելուց հետո:

Կոլտնտեսականներն այսպես եյին ասում վարչությամբ, «Յեթե ուժեր խնայենք և խոտերի արմատները լրիվ չհավաքենք, քաղհանի ժամանակ մեկ մարդու գործը 10 մարդու գործ կլառնա»: Շաքրոյի բրիգադն այնքան արմատ են հավաքում, վոր արտի մոտ հսկայական բլուրներ են կազմվում: Սողոյի բրիգադում, ինչպես կոլխոզնիկներն են ասում, «հողը հայելի յե դաֆճել»: Յեկ յերբ բացվեցին սպիտակ փաթիլները պարզվեց, վոր Սողոյի բրիգադը պետությանը 2 ան-

գամ՝ ավելի բամբակ եւ տալու, քան նախատեսված եւ պայմանագրով:

Փարաքարի կոլտնտեսականները, վորոնց շարքերում առանձնապես ցայտուն կերպով եյին արտահայտվում պետությանը հակադրվելու մանր բութուական և կուլակային հոգեբանության մեացորդները, այժմ այդ կոլտնտեսականները դիտակցորեն և բարձր պաֆոսով ժամկետից շուտ ու շատ առաջ արդեն կատարել եյին պետությանը հաց հանձնելու պլանը, առաջին իսկ կալից վերադարձել են պետությունից ստացած սերմվարկը:

Փարաքարը յեղակի չեւ չունվարյան պլենումից և առաջնորդի պատմական ճառից հետո, այս գարնանը և ամառը մենք բազմաթիվ կոլտնտեսություններում մեծամասնություն նվաճեցինք, հասանք այնպիսի դրության, վոր շատ վայրերում կոլտնտեսականներն սկսեցին մասսայաբար, «ամբողջ կոլտնտեսությունով խոսել» ծույլերի, լոդրերի, գոփողների գեմ, իրենց անբարեխիղճ հարեվանների գեմ, վորոնց հետ բարեխիղճ կոլտնտեսականնը մինչև այժմ, ին սովորության համաձայն, չեր ուզում գժավել:

Այժմ նա, գիտակից և առաջավոր կոլտնտե-

սականն արդեն գժավում է, վորովհետեւ նա սկսել եւ վողջ կոլտնտեսության գործն ի՞ր գործը համարել:

3.

Մենք խոսք բացինք անբարեխիղճ հարեանի հետ գժավելու մասին: Բարեկամական և հարեվանական շահերի ստորագասումը կոլտնտեսության շահին, ինչպես և դրա հետ կապված հասարակական կոնտրոլի զարգացումը դաշտում՝ կոլտնտշարժման նոր ետապը բնորոշող հիմնական յերևույթներից ե, վորը շատ կարևոր տեղունի այս տարվա գարնանացանի և բերքահավաքի քաղաքական արդյունքների մեջ: Դիտակից, առաջավոր կոլտնտեսականն այժմ սկսել ե մտահոգվել վոչ միայն իրեն հանձնարարված աշխատանքի արդյունքով այլև, հարեվանի աշխատանքով: Յեվ այժմ կոլտնտեսություններում մեծ չափերի յեւ հասել հասարակական կոնտրոլը, աշխատանքի փոխադարձ ստուգումը:

Ահա մի տեղեկանք Վաղպատի շրջանի շարքային ու փոքր մի կոլտնտեսության—Քյոլանլույի կոլտնտեսության—բըի գաղների վարք ու բարքից:

«Բրիգադի ողակները շատ հաճախ ստուգա-
ման են գնում բրիգադի մյուս ողակնե-
րին: Յիթե նրանք հայտարերում են վատրակ
աշխատանք, մի քանի ըռպես ընդհատում են հա-
րևան ողակների աշխատանքն ու ամոթանք են
տալիս, նախատում նրանց: Այսպես, Մելիք Զա-
մարյանի ողակն իր քաղաքանը վերջացնելուց հե-
տո «արշավ» ե կազմակերպում բրիգադի մյուս
ողակների վրա: Իր մի արշավի ընթացքում նա
հայտարերում ե, վոր Շուշան Բագայանի ողակը
(№ 9) քաղաքանը կատարել ե վատրակ: Մելիքը
դաշտում բոլորի առաջ նախատում ե»


— Տո, զու չես իմանում, վոր վատ քաղ-
հանով համ իմ տունն ես քանդում, համ քոնը:
Փարաքարցի Մանվել Մարկոսյանն իր 5
ընկերներով մեկ որում կատարում եր միայն կես
հեկտար մարգոց, այն ել շատ վատրակ: Նրանց
հոգամասին կից աշխատող հարվածայինները՝ Բա-
գալը և Հարությունը նկատում են այդ, նախա-
տում են նրանց դաշտում, հարցը տեղափոխում
են ցանքկոմ և ստիպում են նրանց լավ աշխա-
տել: Հաջորդ որերին Մանվել Մարկոսյանի ողա-
կը արդեն որական կատարում եր 1 և կես հեկ-
տար. բարձր վորակի մարգոց:

Այսպիսով, կուլակային ինդիվիւդալիստական տեն-
դեցների, գովիզականության ու անկարգապա-

հության յերևույթների կողքին, վոր բավական ու-
ժեղ կերպով դեռ արտահայտվում ե մի շարք
կոլտնտեսություններում, կոլտնտեսականների ա-
ռանձին խմբերի մեջ նկատվում ե, վոր կոլտըն-
տեսականի գիտակցությունը պատում ե իր
ողակի, իր բրիգադի անմիջական աշխատանքի
շրջանակը. իր հողակորի ափերից արգեն դուրս
ե գալիս նրա գիտակցությունը և բարձրանում
կողջ կոլտնտեսության ու նրա մեջ միացած հար-
յուրագոր մարդկանց կոլեկտիվ շահերի մակար-
դակը: «Պրավդայի» խոսքերով ասած՝

2496 ՀՀ 07 (30635-67)

«Այժմ նորը, կոլտնտեսայինն ավելի ու ավե-
լի մոտ հարազատ սեփական ե դառնում: Հինը,
մենատնտեսայինն ավելի ու ավելի հեռանում ե
գեպի անցյալը և զուրս ե մղվում նոր շահերի
կողմից, նոր հոգսերի, նոր հեռանկարների կող-
մից, վերջապես նոր մտահայտության կողմից:
Խոսելով Բեղենչուկի կոլտնտեսականների կող-
մից ընկ. Ստալինին ուղղված շոր նամակի խոս-
քերով, այդ պրոցեսը կատարվում ե հետեւյալ ձև-
վով—առաջ կոլտնտեսականն ասում եր՝ «այս ինն
ե, իսկ այս կոլտնտեսայինն ե». այժմ նա առում
ե՝ «իմը՝ կոլտնտեսայինը: Կոլտնտեսական
գյուղացու կանքը հաստատապես մտնում է առաջ-
նունի մեջ, սոցիալիստական աշխարհագրական
թյան գրանիտե ափերի մեջ»:



4.

Կոլտնտեսական շարժման մեջ առաջացած այդ բեկման արդյունքը յեղավ հացահատիկի և խաղողի չտեսնված առատ բերքը։ Բացառությամբ Աբարանի, Ալստայի, Մարտունու, Ն. Բայզետի և մի քանի այլ շրջանների, ուր ագրոտեխնիկական միջոցառությունները խիստ թույլ եյին և ուր պայքար չկազմակերպվեց մոլախոտերի դեմ, մնացած շրջաններում բացառիկ հաջող բերք ստացվեց։ Լենինականի մեր թված կոլտընտեսությունների գարնան որինակելի աշխատանքը յեղավ այն, վոր պարզապես գերմանական բերք ստացվեց։ Այստեղ Բայանդուրի, Թափադուրի, Ինչպես և Արթիկի, Հոռոմի և մի քանի այլ գյուղերի կոլտնտեսություններում հեկտարից 20—25 ցենտներ բերքը սովորական եր։ Թափադուրակի կոլտնտեսության № 3 բըթգաղը հեկտարից 33 ցենտներ գարի ստացավ, մի բերք, վորին առաջավոր Ամերիկայի ֆերմերներն ել յերանի կտան։

Ուզունլարի կոլտնտեսությունը, վոր շարունակ հաց եր գնում, Զորագեսի ուժով աշխատող

հակա կալսիչով Յ ամիս անընդհատ կալսում ու չեր կարողանում ավարտել կալը։

Աղա ես զահրումարն ել պահեստ չմնաց, ել գոմ չմնած լցրինք։ Տեղ ու դադար չկա։

Մաշինեն ես յերկու ամիս առական 6 հաւար կիլո ցորեն ա տալիս, հա գեղերի տուտը չի յերևում, — կատակով սրտնեղած «գանգատություն» եր Ուզունլարի կոլտնտեսության նախագահը։

Դիլիջանի Պողոս-քիլիսա գյուղի մենատնտես ծերունիներից մեկն ասում եր. «Համարյա վաթուուն տարի կի՞ եսպես բերք չեմ տեսել, վոր ունի կոլտնտեսությունը։ Համա դե նրանց հալալ ըմ, շատ ջիգարով աշխատեցին»։

Յեկ «Ջիգարով աշխատելու» անմիջական արդյունքը յեղավ այն, վոր այս տարի մեծ քանակությամբ կոլտնտեսականներ հարստացան։ Բայանդուրի կոլտնտեսությունիկների աշխատը մեկ ու կես փթից ավելի հաց ե ընկնում, չոսոմի կոլիսովում 18 կիլո՝ անցյալ տարվա 5 կիլոյի դիմաց, Թոմարդաշի, Թափադուրակի կոլտնտեսությունում մինչև 18—19 կիլո հացահատիկ։ Նախ-

ւ ն մենատեսի աղքատիկ ամբարն
ի վիճակի չե այդքան հաց ընդունելու:

Յեվ իսկապես նայենք մի քանի կոլտնտե-
սականների ստանալիքին:

ԱՆՏԱՆՈՍ ԴԱՇԱՐՑԱՆ (Թումարդաշ Կյու-
ղից) — յուրաքանչյուր աշխորին 19 կիլո հաշված
ինձ կհասնի 3168 կիլո հաց, — ասում ենա, — բաղ-
կացած եմ 3 անձից, ամեն անձիս կընկնի 1056
կիլո, կամ 66 փութ, իսկ անցյալ տարի, յերբ
անհատ տնտեսատեր եյի, ստացել եմ ընդամենը
16 փութ:

ԴԱՆԵԼ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ (Փանիկից) — եղ
քոփողի կուլակներն ինձ ջղայնացրին թե՝ «աշ-
խորին 6 կիլոյից ավելի չի հասնի»: Նստեցի հաշ-
վեցի նախագահի ու հաշվետարի հետ միասին:
Հնդհանուր բերքից դուրս գալով մեր պարտքե-
րը, 1933 թ. աշնանացանի և 1934 թի գարնա-
նացանի սերմացուն, ապահովագրական սերմֆոն-
դը և այլն, ելի ամեն աշխորին ընկալ 18 կիլո
հաց: Իմ ընտանիքը բաղկացած ե 9 անձից,
կտանամ 6300 կիլո հաց, անցյալ տարվա 1456
կիլոյի դիմաց: Ինձանից քիչ բերք չեն ստանա-
լու նաև կոլտնտեսականներ Մանսա Մանսյա-
նը, Արշակ Քավեյանը և ուրիշները:

ԲԱԲԵԿԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ (Բայանդուր) — ինքը և
կինն են: Կստանա 440 փութ հաց: Հոյակապ
ծրագիր ունի նա: Նա պետք է գնի մահճակալ-

ներ իրեն և կնոջ համար, նոր շորեր, հայելի, պա-
հարան և ստեղծի կոլտնտեսական ու մարդավա-
յիլ կյանք:

ԼԵՎՈՆ ԿԱԹՈՒՅՑՅԱՆ (հարվածային կոլտըն-
տեսական թափաղուլակից) — Եսպես պատահեց,
ասում ե Լեոնը՝ հորս նման յես ել բատրակ եյի
զյուղում: Աշխատում եյինք ու բան դուրս չեր
գալիս: Յերբ մեր զյուղում կոլտնտեսություն
կազմակերպվեց յես ել առաջին հերթին մտա: Մի
քանի տարի աշխատում եյինք: Ես անտեր հողե-
րը կարծես թե բերքից կտրվել եյին, ելի չքա-
վոր եյինք, ելի պահանջում եյինք պետությու-
նից: Ես տարի մենք համկացանք, թե ինչիցն եր
այդ, մենք՝ կոլտնտեսականներս վատ եյինք աշ-
խատում անբարեխիղն, անազնիվ եյինք աշխա-
տում: Գործը մի կերպ յուա եյինք տանում, բայց
բան դուրս չեր գալիս:

Կոլտնտեսականների առաջին համագումարում մեր
սիրելի առաջնորդ ընկ. Ստալինն ասաց, թե 2-3
տարվա մեջ բոլոր կոլտնտեսականներին պետք ե
դարձնել ունեղոր: Լավ բան եր ասել: Ունեոր
գառնալը մեղանից եր, ինդիբը քննության ա-
ռանք մեր կոլտնտեսության մեջ և վորոշեցինք
գառնալ ունեոր: Դրա համար անհրաժեշտ եր աղ-
գառնալ, բարեխիղն, վորակյալ աշխատանք: Դրա հա-
նիվ, բարեխիղն, վորակյալ աշխատանք: Դրա հա-
մար անհրաժեշտ եր բարձր բերք ստանալ: Յեվ
մենք այս տարի բարեխիղն աշխատեցինք: Նա-
խատեսել ենք յուրաքանչյուր աշխորին հաց ստա-

Նալ 13 կիլո, բայց փաստը ցուցյ է տալիս, վեր
ավելի շատ ենք ստանալու, ասենք 13 կիլոն ել
քիչ բան չեմ Բարեխիղճ աշխատող կոլտնտեսա-
կանն այնքան հաց կտանա, վոր տեղ չի ունե-
նա լցնելու: Հենց որինակի համար յես: 5 անձ
ենք ընտանիքով, աշխատողներ ենք 2 հոգի:
Մոտավոր հաշվով յես հաց պետք ե ստանամ 45
ցենտներ, գազար պետք ե ստանամ 35 ցենտներ,
կարտոֆիլ՝ 10 ցենտներ. կաղամբ՝ 10 ցենտներ,
յուղ, պանիր, ձեթ և եսպես մի շաբք մթերքներ:
Հաճախ յես ու կինս խոսում ենք մեր ստանա-
լիքի ու ես տարվա առատ բերքի մասին կինս
հարցնում ե.

— Ի՞նչից եր ես լավ բերքը, կեռն...
— Լավ աշխատանքից...

Եսպես: Բարեխիղճ, լավ աշխատանքի հետ-
և տեսանքով վոչ միայն յես, այլ և մեր կոլտնտե-
սականներից շատերն ես տարի ունեոր են դառ-
նալու:

Այսպիսով իրականանում ե կարիքի տակ
կուչ յեկած գյուղացու զարավոր յերազը հարըս-
տանալու մասին—յերազ, վոր յերբեք իրականա-
նալ չեր կարող բուրժուական կարգերում և այժմ
կյանք և մտնում սոցիալիստական կարգերում,
վորպես այդ կարգերի եյության արտահայտու-
թյուններից մեկը:

Իրականանում ե մեծ առաջնորդի ցուցումը

կոլտնտեսությունները բայց կիկյան և կոլտնտե-
սականներին բարեկեցիկ, կուլտուրական կյանք
վարող մարդիկ դարձնելու մասին:

Այդ իրականանում ե, և յերեկվա «իր մի վա-
ռեկի համար արյուն թափող» գյուղացու մեջ ա-
ռաջանում ե վողջ յերկրի ու վողջ պետության
շահը պաշտպանելու գիտակցությունը, վորի ար-
տահայտությունը յեղանի այն անկեղծ պափուը,
վորով այս տարի դեպի պետության պահեստ-
ներն եր քշում առաջավոր կոլտնտեսականն իր
աշխատանքի արդյունքը՝ կոլտնտեսության առա-
ջին կալի բերքը, հանձնում եր անգամ վերջին
յերեք—չորս տարվա պալրաքը (նույիսկ «Անսատ-
ված»-ը տվեց 3 տարվա պալրաքը՝ 650 ցենտներ
հաց): Դրա հետեւանքով Հայաստանում առաջին
անգամ, շատ կարճ ժամանակում, գերակատար-
վեցին հացամթերումների պլանները բոլոր գծե-
րով:

Այդ՝ մեր կուսակցության գծի խոշոր հաղ-
թանակն եր զյուղում: Ինչպես և մեծ հաղթա-
նակ եր այն, վոր աշխատավոր մենատնտեմներն
այս աշնան իրենց կոնֆերանսներում անկեղծո-
րեն հայտարարեցին:

— Մ ենք լիովին համոզվեցինք, վոր

Գրկությունը, լավ կյանքը կուտանտեսության մեջ ե, վորայլ կանապարհ չկադեպի յետ:

Ու յեկան խմբերով:

5.

Սակայն գերազնահատել այդ ամենը, իդեալականացնել կոլտնտեսականներին կարող են մանր բուրժուական հովերով տարված «ձախլիկները» միայն: Սիսալ կլիներ կարծել, թե ահա կոլտնտեսականի վերադաստիարակման գործը սահուն կերպով առաջ է ընթանում:

«Սոսավել ևս սխալ կլիներ կարծել, թե կոլտնտեսությունների անզամներն արդեն սոցիալիստներ են դարձել: Վաչ, կարիք կա դեռ շատ աշխատանք կատարելու, վորակազի վերամշակնք կոլտնտեսական գյուղացուն, շրջենք նրա ինդիվիդուալիստական հոգեբանությունը և պատրաստենք նրանից սոցիալիստական հասարակության խկական աշխատավոր (Ստալին, «Լենինիդմի հարցեր» եջ 61):

«Սիսալ կլիներ գործը պատկերացնել այնպես, թե բոլոր կոլտնտեսականները գլխովին արդեն պատրաստ են մեռնելու կոլտնտեսական բերքի պահպանության համար, թե վոչ կուտակը, վոչ եւ կոլտնտեսականների առանձին խմբեր,

այլևս վոչ մի դիմադրություն չեն ցույց տալիս կուսակցության և կառավարության ձեռնարկումներին» (Պ. ՊՈՍՏԻՇԵՎ):

Սիսալ կլիներ նույնպես կարծել, թե կուտանտեսականն աստիճանաբար չի յեփվում հանրային արտադրության պրոցեսում: Նա յեփվում, փոխվում ե: Սակայն առայժմ մենք միայն ծիրերն ունենք: Իսկ դրա հետ ավելի շատ, մանր սեփականությանը կառչելու, կորպելու, մանր բուրժուական անկարգապահության ու թափաթթվագածության յերևույթներ, վարոնք բոլոր տեսակետներից վնասում են կոլտնտեսական կարգերի ամրացման գործին գյուղում:

Այդ կարգի փաստեր՝ վորքան ուղեք մեր կոլտնտեսությունների գործունեյության ամենաշերջին շրջանից:

Հրապարակնք մի քանի մանր փաստեր:

Ան բարեխիզած, անտարբեր վերաբերմունք դեպի կուտնտեսության գույքը:

1) Սարուխանի կոլտնտեսության անդամ Անուշ Թումանյանը կոլտնտեսության հորթերին այնպիսի «խնամք» ե ցույց տալիս, վորթից 6-ը սատկում են:

2) Խաչիկ գյուղի (Դարալազյաղի շրջան) կոլտնտեսականները չեն մաքրում ու թիրարում կոլտնտեսության լծկաններին: Բայց չեն վոր նըրանք իրենց անտեսության մեջ ամեն որ փայտայում ու թիմարում ենին իրենց «ախտեր» յեղանը:

3) Վարդանլույի (Դարավիլիսայի շրջան) կոլտնտեսությունում անասունների մեջ տարածված ե քոս հիվանդությունը: Դեղորայքը հանձնում են կոլտնտեսական Անդրանիկ Ասոյանին ու Լիպարիտ Բաղդասարյանին և հանձնարարում են շտապ գործադրել: Սրանք պարզապես գործն իրենցը չեն համարում, չեն մտահոգվում կոլտնտեսության հորթերի բուժման գործով, 15-20 որ ձգձգվում ե բուժման գործը և զոհ են տալիս 40 հորթ:

4) Դսեղի և Վորնակի (Ալահվերդու շրջան) կոլտնտեսություններում այս տարի ծնված գոճիները սատկել են 100 տոկոսով:

Անկարգապահության և աշխատանքային շաբաթը կազմակուծելու գաղափառ փաստեր.

1) Գողթ (Կոտայքի շրջան) գյուղի կուլակային առարկերը համոզում են կոլտնտեսական-

ներին, վոր յեթե դաշտ՝ աշխատանքի չգնան, կառավարությունն ստիպված կլինի բավարարել նրանց հացի պահանջը: Կոլտնտեսականները լսում են նրանց և յերկու որ աշխատանքի չեն գնում:

2) Վարդանլույի կոլտնտեսության մեջ գեռ 10 չքավոր ու միջակ գյուղացիներ կան, վորոնք չեն կատարում բրիգադիրի և կոլտնտվարչության կարգադրությունն ու աշխատանքի չեն գնում:

Գորության և գորողականության փաստեր.

1) Սարուխանի կոլտնտեսության անդամ Գեղամ Նազարյանը կոլտնտեսության սերմացուն գերադասում ե իր տուն տանել, քանի տանել դաշտ:

2) Գովրիկ կոլտնտեսությունում Հունան Բաղդասարյանը, Գերասիմ Հակոբյանը և Ծառուկ Բաղդասարյանը հաջողեցնում են պահեստից ավելի ստանալ 6 փութ գարի:

3) Արբաթի կոլտնտեսության ձիապան Աստղ Զեյնալովը 3 ամիս շարունակ գողացել է ձիերին հատկացրած գարին:

4) Համզաչիմանի կոլտնտեսության դարբին Քոչինյանը, յերբ թիթեղում եր կոլտնտե-

սության պահեստի տանիքը, չմոռացավ թիթեղներից մեկն առանց մեխելու թողնել, փորտեղից հաջողությամբ գուրս տարվեց կոլտնտեսության կարտոֆիլը: Իսկ նրա ջրաղացպան հայրը չեր մոռանում իրենց բաժինը հանել ջրաղացի «շահադի» ցորենից:

Այս փաստերի շարանը շատ կարելի յէ յերկարացնել: Այսպես վոր կոլտնտեսական կարգերի ամրացման գործի հիմնական բացառական գործոնն այժմ կոլտը նտեսականների մի մասի մանր սեփականատիրությունից բղխող արատներն են, վորոնք թեյեվ մաշվելու ու վերացման պրոցես են ապրում, սակայն այժմ, և գեռ բավական ժամանակ, գըլի ավոր չարիքը կհանդիսանան կոլտնտեսական շարժման համար:

Կոմունիստների և գիտակից, առաջավոր կոլտնտեսականների պայքարն այժմ այդուղղությամբ պիտի կենտրոնանա: Չե՞ վոր անտեսական պատվանդանից զրկված թշնամին այժմ կոլտնտեսության ներսում հենվում ե կոլտնտեսականների մի մասի մանր սեփականաս իրոջը հա-

տուկ «ճոգու և գործի» վրա: Այդ շատ պարզ յերեաց վերոհիշյալ մի քանի որինակներից:

«Պրավդան» այդ առթիվ ամենայն իրավամբ գրում ե՝

«Մեր գյուղական կազմակերպություններից, մեր կոմունիստներից ու կոմյերաականներից շատերը գեռ չեն ըմբռնել այն ուղղակի ու անմիջական կապը, վոր կա կուլակային դիմադրության, կոլտնտեսությունների դեմ մղվող կուլակային պայքարի, կուլակային վնասարարության և այն մանր բուրժուական թափթափածության, պորտարուծության ու անդիսցիպլինարության միջև, վոր դեռ արմատախիլ չեն արվել կոլտնտեսություններում:

Կուլակային դիմադրութան ուժն այսոք չափվում ե վոչ այլ ինչոք յեթե վոչ միայն կոլտնտեսության ներսում յեղած կարգապահությամբ»:

Ահա ինչ ուղղությամբ պետք ե կենտրոնացնենք հարվածը:

Առանձնապես այժմ պահանջվում ե, վոր մեր կուսակցական կազմակերպությունները հանդիս բերեն բայլշեկլյան կազմակերպվածություն և ստեղծեն յերկաթյա դիսցիպլինա: կոլտնտեսականների շարքերում: Վերև բերված որինակներից յերեաց, թե թշնամու գործը, միա-

Խառնված կոլտնտեսականների մի մասն անդիւ-
տակից հետամնաց տրամադրություններին և վե-
րաբերմունքին դեպի կոլտնտեսական գույքը,
վորպիշի մսամներ և հասցըել մեր կոլտնտեսա-
կան անամնաբուժությանը։ Այդնույն յերեսութ-
ներն այս կամ այն ձևով հանդես են շալիս բամ-
բակի մշակության դեմ սաբուաժ կազմակեր-
պելու, ինչպես և բերքահավաքի գործում (խոտ-
հարքների ու արտերի փչացումը կոտայքի մի
շարք գյուղերում, անխնամ վերաբերմունքը դե-
պի բերքահավաքի մեքենաները բազմաթիվ կոլ-
տնտեսություններում և այլն)։ Իսկ ամենից շատ
մանր սեփականատերն իր հոգու խորքը, իր հա-
կապետական եյությունը ցույց ե տալիս պետու-
թյան հանդեպ ունեցած պարտավորություննե-
րը կատարելու ժամանակ։

Դեսությանը հակադրվելու տրամադրու-
թյուններն ու գործն առանձնապես ցայտուն
կերպով դրսերվեցին իջևանի շրջանի Սոփ, Սև-
ֆար, Ղափանի, Յեղվարդի, Ալլահվերդու, Արճիս և
մի շարք այլ գյուղերում, ուր առաջին կալի հա-
ցը պետությանը հանձնելու փոխարեն, բաժան-
վեց կոլտնտեսականներին։

Կուլակային սաբուաժի այլորինակ սեցի-

դիովներն անխուսափելի կլինեն, յեթե անողոքա-
բար չջախջախվեն, կուլակային դիմադրության
յուրաքանչյուր փորձ, յեթե մենք, ինչպես վոր
պետքն ե, չպայքարենք պետությանը հակադրվե-
լու հակակոլտնտեսային, մանը սեփականատիրա-
կան տրամադրությունների ու պրակտիկայի դեմ
և յեթե կոլտնտեսականների գիտակցությունը
չբարձրացնենք մինչև վողջ յերկրի ու պետու-
թյան շահերն ըմբռնելու և պաշտպանելու մա-
կարդակը։

Դրանով միայն մենք լիովին կզրկենք կու-
լակությանն իր այդ վերջին հենարանից և վերջ-
նականապես կվերացնենք նրա ազդեցությունը
կոլտնտեսականների հետամնաց շերտերի վրայից։

Այդ պայքարում առաջավոր տեխնիկայով
գինված կոլտնտեսական խմբերի արտադրական
գործունեյության սլրոցեսում, աստիճանաբար ու
հարատե կվերափոխի նախկին սեփականատերը,
վերջնականապես մոխիրների տակ կթաղվի նրա
հին, մենատնտեսի հոգեբանությունը։

Այդ ժամանակ մենք վերջնականապես ու
անդառնելի կերպով կփակենք այն «Սուխարևեկան»,
վոր նստած և կոլտնտեսականների մի մասի հո-
գու և գործի մեջ, և դարձավոր սովորությունից

աղատագրված նախկին գեղջուկի գլուխեցու
թյունն անկաշկանդ կղարգանա ու կծավալվի սո-
ցիալիստական աշխարհզացողության նոր,
գրանիտե ափերի մեջ...

U b uq m b s p b p,
1933 Pthq:



Տեխ. Խմբագիր՝ Պ. Սարոյան
Արյագըց՝ Սուս Հակոբյան

Համաձայն և արտադրության 1933 թ. գեկտ. 10-ին
Առողջապահության 1933 թ. գեկտ 14-ին:
Դաշտավայր № 545 տիրած 2000 գլավիթ 8973

3616416. 43

۲۷۳

ԳԻՆԸ 20 ԿՈԹԵԿ

6

594



B. A.H.

О том, как выздоравливается психология мелького земледельца

Сельхозгиз

1933

Э р и в а н ь

«Ազգային գրադարան

1015313

NL0045312

30.372